բողոք ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ, 381-րդ, 387-րդ, 391-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. <<Գրիտիգ>> ՍՊ ընկերության վերաքննիչ բողոքը բավարարել: Թիվ ԵԴ2/3487/02/25 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 20.05.2025 թվականի վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ.

1.1 Հայցը բավարարել: ՀՀ քննչական կոմիտեի գլխավոր քարտուղար Կ. Մարգարյանի 14.03.2025 թվականի <<<<Գրիտիգ>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին>> թիվ 68-Ա հրամանը ճանաչել անվավեր:

1.2 ՀՀ քննչական կոմիտեից հօգուտ <<Գրիտիգ>> ՍՊ ընկերության բռնագանձել  50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես հայցվորի կողմից առաջին ատյանի դատարան հայցադիմում ներկայացնելու համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

2. ՀՀ քննչական կոմիտեից հօգուտ <<Գրիտիգ>> ՍՊ ընկերության բռնագանձել  75.000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ՝ որպես վերաքննիչ բողոք բերելու համար վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշման կատարում ենթադրող մասը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

Նախագահող դատավոր՝ **Իվան Բաղմանյան**

Դատավորներ՝ **Սերգեյ Սահակյան**

**Լեոնդրուշ Հովհաննիսյան**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*